

գնացութեան մանրամասնութիւններու մասին զիմել (Ուղղուղեան . էջ 237-240. նաև ԲԲ. Բ. էջ 114):

ԴԱԻԻԹ Ա. ՊԵ.— (1316-1321) ասոր գերեզմանը՝ ըստ աւանդութեան՝ Ս. Յակոբի գաւթին մէջ կը գտնուէր, բայց երբ գաւթը կը նորոգուէր Դաւիթ պարքին . գերեզմանաքարն ալ տեղէն հանուելով նոյն գաւթի աջակողմը գտնուող հարաւային սիւնին վրայ կը զետեղուի: Տապանագիրն այս է. «Տապանս այս որ կայ աստէն, է գերեզման սա Տէր Դաւթի գերեզմանիկ և սուրբ հեղինակի. գծեզ աղաչէ աղերսալի. յիշման ատեն կիս արժանի. թվ. 92.» (= 1321): ՄՁ. Թ. 271 նաշոյցին յիշատակորանին մէջ իբր ստացող նոյն ճաշոցին կը յիշատակուէր Դաւիթ պարքիանունը հետեւեալ կերպով. «... Յամի եօթն հարիւրորդ վաթաներորդի հինգերորդի (= 1316) թուականութեան հայոց. գրեցաւ սա ի Ս. յԱճակոսի քաղաքս Եմ. ընդ հովանեաւ սուրբ տաճարիս որ յանուն սուրբ եւ զաւրեղ հրեշտակապետացս միքայէլի եւ գաբրիէլի հրամանաւ եւ ծախիւք աստուածարեալ եւ հոգիւնկալ եպիսկոպոսին Երուսաղէմի աւր Դաւթի ձեռամբ յոգնամեղ և անարհեստ սուտանուն գրչի ստեփանն մակսնուն յերկայն կոչեցեալ: ... Գրեցաւ ի թագաւորութեան հայոց աւչնի և ի հայրապետութեան տէր կոստանդիա. ի գառն եւ յանբարի ժամանակս... Արդ աղաչեմ զամենեսեան որք վայելող էք եւ հանդիպողք այսմ լուսաղարդ մատենի յիշել և մեղաց թողութիւն խընդրել ի Քրիստոսէ յառաջասացեալ եպիսկոպոսին Տէր Դաւթի և ծնողաց նորա և բնաւին զարմիցն նորա կենդանեաց և հանգուցելոց: ... Գրեցաւ ժամագիրքս հրամանաւ Տէր Դաւթի մեծի և հոչակաւոր կաթողիկէ եկեղեցւոյն Եմի. Ս. Յակոբայ Տեառն եղբաւրն և միւս և ս Յակոբայ եղբաւր Յովհաննու վասն այնորիկ գրեցի զայլ աւելի կարդացմունքդ և գանձերդ և զապղերդ...»: ՄՁ. Թ. 74, ձեռագիր Ճառքնիւր մը՝ որ ՉԿԷ (= 1318) թուին Դրազարկի մէջ ընդօրինակուած է Ստեփանոս երկայն կոչուած գրչի ձեռօք, Երուսաղէմի սոյն Դաւիթ եպս.ին կողմէն յիշատակ կը արուէր Ս. Յակոբի վանքին:

ԴԱԻԻԹ Բ. ՊԵ. ՄԵՐՏԻՆՅԻ.— (Քաջ երամիշտ), Մերտինցի Անդրէաս պարքի եղբօր որդին, Հայրը՝ միս. Յովնաննես, Մայրը՝ միս. Ղանար, եղբայրները՝ Տեր Կիրակոս և միս. Չափար, հան-